ԳՆՈՒՄՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ք. Երևան 18.03.2013թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ԳԲԽ-15/13 բողոքը քննող հանձնաժողովի

ԳԲԽ-15/13 բողոքը քննող հանձնաժողովը՝ գործելով գնումների բողոքարկման խորհրդի անունից, քննելով «Մեջիք Սթիք» ՓԲԸ-ի կողմից 26.02.2013թ. «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին ներկայացված բողոքը, ինչպես նաև ուսումնասիրելով ԳԲԽ-15/13 բողոքի վերաբերյալ «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից ներկայացված եզրակացությունը պարզեց.

1. <u>«Մեջիք Սթիք» ՓԲԸ -ի կողմից ներկայացված փաստերը, հիմնավորումները և պահանջը.</u>

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին ներկայացված բողոքով «Մեջիք Սթիք» ՓԲԸ-ն հայտնել է, որ ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար շաքարավազի փաթեթավորման ծառայությունների ձեռքբերման նպատակով ս.թ. դեկտեմբերի 25-ին կազմակերպվել է «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲԸԾՁԲ-7/1» ծածկագրով էլեկտրոնային եղանակով բաց ընթացակարգ: Նշված ընթացակարգի հրավերով սահմանվել է, որ հայտերի բացումը տեղի կունենա www.armeps.am էլեկտրոնային կայքում հրապարակվելու պահից հաշված ոչ շուտ քան 40 օր հետո, սակայն չի նշվել հայտերի ներկայացման վերջնաժամկետի և հայտերի բացման ժամը:

Նշված ընթացակարգի հայտերի բացման նիստը տեղի է ունեցել ս.թ. փետրվարի 5-ին:

ՀՀ կառավարության 29.12.2011թ. N 1916-Ն որոշմամբ հաստատված «Էլեկտրոնային ձևով գնումների կատարման» կարգի 4-րդ կետով սահմանված է, որ էլեկտրոնային ձևով գնումներն իրականացվում է www.armeps.am էլեկտրոնային կայքի միջոցով, որը պարունակում է էլեկտրոնային տեղեկագիր, էլեկտրոնային տեղեկագրի գրատախտակ, մատակարարների գրանցամատյան, պատվիրատուների գրանցամատյան, ավտոմատ աճուրդի առաջարկվող գնի տեղեկացում և այլ անհրաժեշտ տարրեր:

«Մեջիք Սթիք» ՓԲԸ-ն հայտնել է, որ ընկերությունը ցանկացել է մասնակցել «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲԸԾՁԲ-7/1» ծածկագրով բաց ընթացակարգին, սակայն ս.թ. փետրվարի 2-ից մինչև

5-ը ներառյալ չի կարողացել բեռնել նշված ընթացակարգին մասնակցելու նպատակով ներկայացվող հայտը՝ armeps համակարգի խափանված լինելու պատճառով:

Ընկերությունը գտնում է, որ խախտվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասը, քանի որ նշված հոդվածով սահմանված է, որ ցանկացած անձ, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, ունի գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք:

Խախտվել է նաև վերը նշված օրենքի 7-րդ հոդվածի 3-րդ մասը, որտեղ սահմանված է, որ էլեկտրոնային ձևով հաղորդակցության համար օգտագործվելիք միջոցները, ինչպես նաև դրանց տեխնիկական բնութագրերը պետք է լինեն ոչ խտրական, ընդհանուր առմամբ մատչելի լինեն հնարավոր ցանկացած մասնակցի և փոխգործակցող՝ տեղեկատվական և հաղորդակցության տեխնոլոգիաների ընդհանուր օգտագործման միջոցների հետ:

«Մեջիք Սթիք» ՓԲԸ-ն հայտնել է, որ փաստացի ընկերությունը զրկվել է վերը նշված ընթացակարգին մասնակցելու իրավունքից, ինչը ընկերության կարծիքով չի բխում գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջներից:

Ելնելով վերոգրյալից «Մեջիք Սթիք» ՓԲԸ-ն խնդրել է դադարեցնել ՀՀ պաշտպանության նախարարության կողմից կազմակերպված «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲԸԾՁԲ-7/1» ծածկագրով էլեկտրոնային եղանակով բաց ընթացակարգը:

2. **<u>ՀՀ պաշտպանության նախարարության կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստերը և հիմնավորումները</u>**.

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ը 01.03.2013թ. N 04/032-398 գրությամբ դիմել է ՀՀ պաշտպանության նախարարությանը՝ խնդրելով կարծիք տալ «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ում 26.02.2013թ. «Մեջիք Սթիք» ՓԲԸ-ի կողմից ներկայացված բողոքի վերաբերյալ:

ՀՀ պաշտպանության նախարարությունը 15.03.2013թ. N ԴՎԱ/682 գրությամբ «Մեջիք Սթիք» ՓԲԸ-ի կողմից «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին ներկայացված բողոքի վերաբերյալ հայտնել է, որ «ՀՀ ՊՆՏԱԴ-ԲԸԾՁԲ-7/1» ծածկագրով բաց ընթացակարգի հրավերը, հայտարարությունը և այլ անհրաժեշտ տվյալները ՀՀ պաշտպանության նախարարության կողմից սահմանված ժամկետում և կարգով տեղադրվել են <u>www.armeps.am</u> կայքում, որտեղ որպես հայտերի ներկայացման վերջնաժամկետ սահմանվել է 2013թ. փետրվարի 5-ը, ժամը 11:00-ն:

Սահմանված ժամկետում էլեկտրոնային հայտ է ներկայացրել միայն «Գրավիտաս» ՍՊԸ-ն:

ՀՀ պաշտպանության նախարարությունը հայտնել է, որ քանի որ վերջինս չունի վերը նշված կայքի սպասարկման կամ տեխնիկական խնդիրների լուծման գործառույթ, ուստի չի կարող որևէ տեղեկություն տրամադրել մասնակիցների կողմից հայտ ներկայացնելու անհնարինության վերաբերյալ:

3. **<u>ԳԲԽ-15/13 բողոքի վերաբերյալ «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի դիրքորոշումը.</u>**

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ը հանձնաժողովին ներկայացրել է իր եզրակացությունը և առաջարկել է «Մեջիք Սթիք» ՓԲԸ-ի կողմից 26.02.2013թ. «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին ներկայացված բողոքը բավարարել՝ դադարեցնել «ՀՀ ՊՆ

ՆՏԱԴ-ԲԸԾՁԲ-7/1» ծածկագրով էլեկտրոնային ձևով բաց ընթացակարգ հայտարարելու մասին որոշումը:

4. ԳԲԽ-15/13 բողոքի վերաբերյալ էական նշանակություն ունեցող փաստերը, ԳԲԽ-15/13 բողոքը քննող հանձնաժողովի հիմնավորումները և եզրահանգումները.

Հանձնաժողովն ուսումնասիրել է «Մեջիք Սթիք» ՓԲԸ-ի կողմից 26.02.2013թ. ներկայացված բողոքը, «ՀՀ ՊՆՆՏԱԴ-ԲԸԾՁԲ-7/1» ծածկագրով բաց ընթացակարգի հրավերը (այսուհետև՝ նաև Հրավեր), «ՀՀ ՊՆՆՏԱԴ-ԲԸԾՁԲ-7/1» ծածկագրով բաց ընթացակարգի մասին հայտարարությունը, ՀՀ պաշտպանության նախարարության Կենտրոնին հասցեագրված 15.03.2013թ. N ԴՎԱ/682 գրությունը, «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի եզրակացությունը:

ՀՀ պաշտպանության նախարարության կողմից շաքարավազի փաթեթավորման ծառայությունների ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲԸԾՁԲ-7/1» ծածկագրով էլեկտրոնային եղանակով բաց ընթացակարգ (այսուհետև՝ Ընթացակարգ):

Ընթացակարգին մասնակցելու նպատակով մասնակցության հայտ է ներկայացրել միայն «Գրավիտաս» ՍՊԸ-ն:

«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲԸԾՁԲ-7/1» ծածկագրով բաց ընթացակարգի մասին հայտարարությամբ սահմանվել է, որ բաց ընթացակարգի հայտերն անհրաժեշտ է ներկայացնել էլեկտրոնային ձևով www.armeps.am կայքում՝ մինչև դրանով սահմանված վերջնաժամկետը:

Հրավերի 1-ին մասի 4.5 ենթակետով սահմանվել է, որ հայտերն անհրաժեշտ է ներկայացնել www.armeps.am էլեկտրոնային կայքում՝ մինչև դրանով (կայքով) սահմանված վերջնաժամկետը, որը չի կարող պակաս լինել նույն ընթացակարգի հայտարարությունը տեղեկագրում /www.armeps.am էլեկտրոնային կայքում/ և http://www.azdarar.am հասցեում գտնվող Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում հրապարակվելու պահից հաշված 40 օրվանից:

«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲԸԾՁԲ-7/1» ծածկագրով բաց ընթացակարգի վերաբերյալ www.armeps.am էլեկտրոնային կայքում «ՄՀ «Շաքարավազի անհատական փաթեթավորման ծառայություն» ձեռքբերում» վերնագրով հայտարարությամբ ժամանակի սահմանափակումը հայտերի ստացման կամ մասնակցության հայտերի համար սահմանվել է 05.02.2013թ. ժամը 11:00-ն, իսկ հայտերի բացման ամսաթիվը՝ 05.02.2013թ. ժամը 11:30-ը:

«Մեջիք Սթիք» ՓԲԸ-ն Կենտրոնին ներկայացված բողոքով հայտնել է, որ ընկերությունը ցանկացել է մասնակցել «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲԸԾՁԲ-7/1» ծածկագրով բաց ընթացակարգին, սակայն ս.թ. փետրվարի 2-ից մինչև 5-ը ներառյալ չի կարողացել բեռնել նշված ընթացակարգին մասնակցելու նպատակով ներկայացվող հայտը՝ armeps համակարգի խափանված լինելու պատճառով:

Կենտրոնի կողմից կատարված դիտարկումների արդյունքում պարզվել է, որ ԱՐՄԵՊՍ (armeps) համակարգը «Մեջիք Սթիք» ՓԲԸ-ի կողմից ներկայացված բողոքում նշված ժամանակահատվածում՝ այսինքն ս.թ. փետրվարի 2-ից մինչև փետրվարի 5-ը ընկած ժամանակահատվածում, եղել է խափանված և չի գործել:

Բացի այդ, ՀՀ ֆինանսների նախարարությունը Կենտրոնին տեղեկացրել է, որ ս.թ. փետրվարի 1-ից մինչև փետրվարի 6-ը էլեկտրոնային գնումների ԱՐՄԵՊՍ համակարգն աշխատել է խափանումներով՝ պայմանավորված տեխնիկական աշխատանքների իրականացմամբ:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետև՝ նաև Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ցանկացած անձ, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, ունի գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք:

Օրենքի 7-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ էլեկտրոնային ձևով հաղորդակցության համար օգտագործվելիք միջոցները, ինչպես նաև դրանց տեխնիկական բնութագրերը պետք է լինեն ոչ խտրական, ընդհանուր առմամբ մատչելի լինեն հնարավոր ցանկացած մասնակցի և փոխգործակցող՝ տեղեկատվական և հաղորդակցության տեխնոլոգիաների ընդհանուր օգտագործման միջոցների հետ:

ՀՀ կառավարության 29.12.2011թ. N 1916-Ն որոշմամբ հաստատված «Էլեկտրոնային ձևով գնումների կատարման» կարգի 4-րդ կետի համաձայն՝ էլեկտրոնային ձևով գնումներն իրականացվում են www.armeps.am էլեկտրոնային կայքի միջոցով, որը պարունակում է էլեկտրոնային տեղեկագիր, էլեկտրոնային տեղեկագրի գրատախտակ, մատակարարների գրանցամատյան, պատվիրատուների գրանցամատյան, ավտոմատ աճուրդի առաջարկվող գնի տեղեկացում և այլ անհրաժեշտ տարրեր:

Հրավերի 1-ին մասի 4.1 ենթակետի համաձայն՝ ընթացակարգին մասնակցելու համար անհրաժեշտ է կայքում՝ էլեկտրոնային տարբերակով ներկայացնել հայտ՝ կցելով համապատասխան էլեկտրոնային փաստաթղթերը (տեղեկությունները)՝ հաստատված էլեկտրոնային ստորագրությամբ կամ բնօրինակ փաստաթղթից արտատպված (սկանավորված) տարբերակով:

Գնումների բողոքարկման խորհուրդը գտնում է, որ էլեկտրոնային ձևով գնումների կատարման ԱՐՄԵՊՍ (armeps) համակարգի խափանված լինելու պատճառով «Մեջիք Սթիք» ՓԲԸ-ն հնարավորություն չի ունեցել բեռնել ընթացակարգին մասնակցելու նպատակով ներկայացվող հայտը, որի արդյունքում վերջինս զրկվել է «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲԸԾՁԲ-7/1» ծածկագրով էլեկտրոնային ձևով բաց ընթացակարգին մասնակցելու հնարավորությունից, ինչը հանգեցրել է Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին և 7-րդ հոդվածի 3-րդ մասերով, ինչպես նաև ՀՀ կառավարության 29.12.2011թ. N 1916-Ն որոշմամբ հաստատված «Էլեկտրոնային ձևով գնումների կատարման» կարգի 4-րդ կետով սահմանված պահանջների խախտմանը:

Այսպիսով գնումների բողոքարկման խորհուրդը գտնում է, որ «Մեջիք Սթիք» ՓԲԸ-ի կողմից 26.02.2013թ. Կենտրոնին ներկայացված բողոքը հիմնավոր է և ենթակա է բավարարման:

Վերոգրյալի հիման վրա և հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 48-րդ հոդվածի 6-րդ մասի 2-րդ կետը գնումների բողոքարկման խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. «Մեջիք Սթիք» ՓԲԸ-ի կողմից 26.02.2013թ. Կենտրոնին ներկայացված բողոքը բավարարել:

2. Դադարեցնել «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲԸԾՁԲ-7/1» ծածկագրով էլեկտրոնային ձևով բաց ընթացակարգ հայտարարելու մասին որոշումը:

Գնումների բողոքարկման խորհրդի որոշումն իրավապարտադիր է:

Գնումների բողոքարկման խորհրդի կայացրած որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

Բողոքը քննող հանձնաժողովի՝

Նախագահ՝ Ազգանուշ Ֆրանգյան

Անդամ՝ Լեոնիկ Խաչատրյան